

ԹԱՂՈՒՄ Ս. ՇԱՀՄՈՒՐԱԴԵԱՆԻ

ՊԱՐԶԱՆԻ ՅԱՆԴԳՆՈՒԹԻՒՆԸ

ԼԱՐՈՒԱԾ ԿԱՑՈՒԹԻՒՆ ԿՐԱՍՆՈՍԵԼՍԿ ԵՒ ԿԱՊԱՆ

Երեքշաբթի, Սեպ. 15-ին Հանրապետութեան նախագահ՝ Լ. Տէր-Պետրոսեանի, պետական եւ կառավարական գէմքերու եւ հոծ բազմութեան մը ներկայութեան է որ կատարուած է տարարախտ Սամուէլ Շահմուրադեանի յուղարկւորութիւնը: Ինչպէս գրած էինք, Սեպ. 15-ի մեր թիւով՝ գրող, լրագրող, Գերագոյն Խորհուրդի երեսփոխան, Սամուէլ Շահմուրադեան զոհ գացած էր Վաղուհաս (Մարտակերտի շրջան), երբ Աղբերիններու մէկ ուսմբը ինկած էր իր գտնուած ականուած վայրը, ինչ որ պայթում յառաջացուցած էր: Ս. Շահմուրադեան զաղափարապաշտ, անկեղծ անձ մըն էր, որու յիշատակը ոգեկոչած են դամբանականներով՝ Մերուժան Տէր-Գուլանեան (նախագահ՝ Խորհրդարանի լրատուութեան Յանձնախումբին, որու անդամ էր Ս. Շահմուրադեան), Վահագն Գրիգորեան (Գրողներու Միութիւն) եւ Վաղզէն Յարութիւնեան (պետը այն ջոկատին որու մաս կը կազմէր նահատակուած Սամուէլը. ինք ալ վիրաւորուած՝ ոտքէն): Մարմինը փոխադրուած է Թոխմախի գերեզմանատունը:

**

Զորեքշաբթի առտու (Սեպ. 16) Երեւանէն մեր առած լուրերու համաձայն ամէնէն մտահոգիչ հարցը կը մնար հացի տաղնապը: Նախորդ օրը, ժամը 18-20-ին սկսած էր երկաթուղային երթեւեկը Սաղախու - Շուլաւեր ճամբով, կամուրջը վերաշինուած ըլլալով: Ուրեմն կը սպասուէր 65 թոն հացահատիկը, որ թէեւ մեծ քանակութիւն մը չէ, բայց եւ այնպէս նուազագոյն մըն է:

**

Սեպ. 16-ին, կրկին պատուիրակութիւն մը մեկնած է Վրաստան (նախ՝ Թիֆլիս, ապա՝ Արխաղիա): Պատուիրակութեան մաս կը կազմեն Սէյրան Պաղտասարեան, Շաւարշ Քոչարեան եւ Վարազդատ Աւոյեան:

**

Զինուորական գետնի վրայ կացութիւնը շատ լարուած է Կրասնոսելսկ եւ Կապան: Զէնքի մեծ կուտակումներ կան Հաղբութի շրջանի արեւելեան սահմանի դիմաց, նաեւ Լաչինի շրջանի հարաւային սահմանի երկայնքին:

Սեպ. 14-ի գիշերը աղբրեջանական ջուկատ մը փորձած է անակնկալ յարձակում գործել Սիսիանի Բոնակոթ գիւղի վրայ, բայց բուն հակազդեցութեան հանդիպելով նահանջած է, 25 մեռեալ ձգելով:

**

Հայաստանի նախագահին մամուլի քարտուղարը՝ Ռուբէն Շուկարեան մամուլի տուելիս մը տուած է եւ կարգ մը տեղեկութիւններ տուած է նաեւ Բաքուի մէջ տիրող մթնոլորտին մասին: Ըստ իրեն, տիրող մթնոլորտին մասին: Ըստ իրեն, ծայր տուած են այլախոհներու լայնածածկ ձերբակալութիւններ: Ասոնք գլխաւորաբար նախկին նախագահ Մութալի-բովի կողմնակիցներն են: Շուկարեան շատ կարեւոր համարած է Լ. Տէր-Պետրոսեանի կատարած վերջին նշանակումները. Վաղզէն Մանուկեանի պաշտպանութեան սպառնալուտու պաշտօնը եւ Ապահովութեան (Անվտանգութեան) Խորհուրդի

Իրաքեան Բիւրտերու պարազուլ Մ. Պարզանի որ վերջերս ընդունուած էր Թուրքիոյ Հանապետութեան նախագահին կողմէ, բուսական խիստ արտայայտութիւններ ունեցած է Թուրքիոյ հասցէին, ինչ որ զայրոյթ պատճառած է թրքական շրջանակներու: Պարզանի որ միշտ կը պաշտպանէր քրտական ինքնավարութեան թէգը, սկսած է խօսիլ անկախութեան մասին, հետեւեալ պատճառարանութեամբ. «Իսկական իմաստով ինքնավարութիւն մը երբեք չունեցանք. այսօր կը Յշմարեմք որ ծանր հարցեր ունի մեր ժողովուրդը, գոյս լուծելու համար ինքնավարութիւնը բաւարար չէ»:

Այսուհանդերձ, Պարզանի կ'աւելցնէ թէ քիւրտ ժողովուրդը Խորհրդարանի մը տէր է այլեւս ու վերջնական վճիռը ան պիտի հաղորդէ. շեշտելէ ետք թէ անկախութիւնը դադրած է երազ ըլլալէ, կ'ըսէ թէ Խորհրդարանական ելոյթով մը հարցը քննարկումի նիւթ պիտի դարձնէ:

Իսկ Թուրքիոյ հետ յարաբերութիւններու եւ ՓԲԲ-ի զինեալ արարքներուն մասին հարցումի մը պատասխանելով քիւրտ ղեկավարը ի'ըսէ. «ՓԲԲ-ի հետ Թուրքիա քող ի'ր հողերուն վրայ պայքարի. քի 270 քմ. անց լեռնային սահմանը ինք չի կրնար պաշտպանել, մեկ ի'նչպէս ընենք: Մեկ արգելք պիտի հանդիսանանք մեր շրջանէն ՓԲԲ-ի յարձակումներուն, սակայն եթէ Թուրքիա այդ պատրուակով Բիւրտիստանը գրաւելու ձեռնարկէ, ան վարան պիտի փոխադարձենք. նման բան երբեք կրնանք ընդունիլ»:

ամբողջացումը: Ասոնք սկիզբն են փոփոխութիւններու, որոնք կը կատարուին պաշտպանութեան համակարգին մէջ: Շուկարեան հերքած է այն լուրը ըստ որուն հրաժարած է Աշոտ Մանուչարեան (Ապահովութեան մարզի յատուկ խորհրդական նախագահին) վերջին նշանակումներու առընչութեամբ: Որքան զիտենք, Ա. Մանուչարեան առողջական պատճառներով - դերյոզնութիւն - քանի մը օր բացակայած էր դուռ բանալով շուկներու: Այդ մամուլի ասուելիս ընթացքին, Շուկարեան յայտարարած է նաեւ որ Արտաքին նախարար՝ Բաֆֆի Յովհաննէսեան Աւստրալիա կատարելիք իր այցելութիւնը յետաձգած է ոչ թէ Պոլիս արտասանած իր ճառին պատճառաւ, այլ որովհետեւ Լեւոն Տէր-Պետրոսեանի պիտի ընկերանայ Նիւ-Եորք: Թէեւ, ճիշդ է, որ ըսած է Շուկարեան «Բ. Յովհաննէսեանի Պոլսոյ ելոյթին որոշ կէտերը իսկապէս կը հակասեն մեր Հանրապետութեան քաղաքական ուղղութեան»:

**

Կառավարութեան որոշումով Նաւասարդ Մինասեան նշանակուած է ազգ. Ապահովութեան պետական վարչութեան պետի առաջին տեղակալ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ եւ բանտապահներու միջեւ մթնոլորտը լարուած կը մընար Զորեքշաբթի առտու, Սեպ. 16-ին: Նախորդ օրը, Մ. Վօզէլ քանի մը